ՁԻՆՈՐԱԿԱՆ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐ

—

Լոնդոնի «Economiste» թերթը մի յօդուած է տպել վերջին տասն և հինգ տարիների ընթացքում Եւրոպայի զինուորական ծախսերի շատանալու մասին։ «Economiste» այդ յօդուածը տպում է իբրև ապացոյց զեներալ Մոլտկեի խօսքի, որ նա խօսեց գերմանական պարլամենտի մէջ զինուորական օրէնքի առթիւ և որով նա հաշուեց Եւրոպան պատերազմների զինուորների, հրացանների և թնդանօթների թիւը և մատնացոյց տուել, թէ դրանց վրա պետութիւնները որքան են ծախսում։

Այդ յօդուածը հետեւեալ վերնագիրն է կրում. «Ինչքան է ծախսում Եւրոպան Ներմանիայի միութեան պատճառով»։ 1866 թուականից, երբ սկիզբ առաւ պրուսական, միացնող քաղաքականութիւնը, Եւրոպական պետութիւնների զինուորական ծախսերը չափազանց շատացան։

Եւրոպական պետութիւնների ընդհանուր ծախսերի գումարը 1879 թուին կազմում էր հինգ հարիւր ութսուն և հինգ միլիոն ութ հարիւր յիսուն հազար ֆունտ ստերլինգ, իսկ 1865 թուին երեք հարիւր քսանուն և ութ միլիոն ութ հարիւր հազար ֆունտ ստերլինգ։ Ուրեմն 1879 թուի ծախսերը, համեմատելով 1865 թուի ծախսերի հետ, շատացել են 177,000,000 ֆ. ստ., որ ռուսաց փոխրով կազմում է մօտ մէկ միլիարդ եօթ հարիւր միլիոն բուլ։

Այդ ահագին գումարի ⅔ բաժինը զինուորական պէտքերի համար է ծախսվում։ Զինուորական ծախսերի աւելանալը պետութիւնների մէջ հետեւեալ կարգով է կատարվել. ամենից շատ Գերմանիայի մէջ, յետոյ Աւստրո-Ունգարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի Ռուսաստանի, Իտալիայի, Սպանիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Դանիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Պորտուգալիայի, Յունաստանի, Թուրքիայի և ամենից քիչ Նվէյցարիայի մէջ։

Եւրոպական բոլոր պետութիւնների պարտքերի ընդհանուր գումարը 1865 թուից մինչև 1879 թիւը շատացել է տասը միլիարդ վեց հարիւր քսանուն և եօթը միլիոն բուլով։ «Economiste» յայտնում է, որ պարտքերի այդչափ մեծանալը պատահել է պատերազմների և պատերազմական պատրաստութիւնների պատճառով։

Պէտք է ի նկատ առնել, որ վերոյիշեալ թուերով հաշվում են ոչ թէ բոլոր զինուորական ծախսերը, այլ վերջին 15 տարիների ընթացքում աւելացածը միայն։

Մի աւելի կատարեալ գաղափար ստանալու համար, թէ որքան ծախս է Եւրոպայի համար այդպէս զինուորված լինելը, բացի վերոյիշեալ թուականներից պէտք է հաշուել նոյնպէս միլիոնաւոր աշխատող ձեռքեր, որոնք խաղաղ ժամանակ հեռացրած են աշխատանքից և հրացանը ձեռքին են կանգնած։

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

—

Վան, 6/18 փետրվար

Ուրիշների թողով Վանեցուցս հարստահարութեանց վրայ գրել, ուրիշների թողով մեր թշուառ գիւղացոց անօթութենէ նրան նեղութիւնների վրայ գրել, ուրիշների թողով Պերլինի գանգատի 61-րդ յոդուածի տակերին ապարդիւն մնալու համար գրել, վերջապէս ուրիշների թողով Գ. Դանէլի կարգված քննիչներին, քամիսկոներին ոչինչ արդիւնք մը յառաջ բերելուն վրայ գրել, ես կուզիմ այսօր «Մշակի» ընթերցողաց ուշադրութիւն պահ մը աղուր հրաւիրել, այսինքն ես կընտրեմ այսօր խօսել վանեցւոց մուսուլման յառաջադիմութեան համար, այս պահի ըլլայ իմ նամակս Նիբիզ, և ես պիտի ջանամ ցոյց տալ ըստ կարելւոյն թէ վանեցիք մուսուլման օրէնք յառաջ գնացած են։ Երեսուն աւելի տարիէ ի վեր Վանի մէջ զրադրոցներ բացուած են, այս երեսուն անգին տարիների ժամանակամիջոցում հազիւ երեսուն հատ ուղիղ կարդալու չափ բանգէտներ յառաջ եկած են. պատճառ չատ բացայայտ է, գի աշակերտ մը մինչև ցայսօր զպրոցէն և վարժարանէն այնչափ կը սուս կայ, որչափ կը սուսյ մահտապատ մը բանդէն և դահիճէն. տղա մը վարժարանի դռնէն ներս մտածին պէս գրիչ կը գտնայ, նա այնչափ ամոթխած և անհամարձակ կը լինի, որ եթէ ձկ մը նորա գասին վերաբերեալ հարցում մը ուզվելու լինի անոր, աշակերտ հաղար անգամ մնանիլ կընտրէ, քան թէ անոր հարցումին պատասխանել. աշակերտ մը զբաղրոց մտածին պէս պէտք է կարդայ այբենարան, Հէգարան, Աղամս, Ամանդիրք, Աւետարան, Գործոց, Նարեկ, զատնք լինցնելու համար առնուազ 8—10 տարի պէտք են. անոնք որ ազգատ են չուտով կը ձգեն զպրոց, և տասկ չտեսնում կերթան, իսկ հարուստ տղաներ, որք կրնան աւելի երկարօրէն զպրոց յամախել, ասոնք ալ լոյս կը զնեն իրենց հօրերու վատատած հարստութեան վրայ և կարմամարէն ուսումը իբրև բոլորվին ապարդիւն բան մը։

Ամառուոյ համառօտ նեգրագիր մը մեր զպրոցաց, որ աւելի սպանդանոցի կը նմանի քան զըպրոցի. զպրոցէն ներս մտնող կը տեսնէ քանի զըպրոցին ընդարձակ սենեակ մը 4—500 տղաներ իրարու վրայ չաչված, գետնի փոշիների մէջ նստած մնանէներ, անդին ալ վարժապետ մը փայտ մը ձեռք բռնած և ֆալական պատէն կախած, որ աշակերտաց լոյս կենալ կը հրամայէ, հազար տեսակ հայհոյանքներ անելով աշակերտաց։ Մեր զպրոցներ այս գիրքի մէջն էին, երբ «Հայկազեան» ընկերութիւն կազմուեցաւ, որոյ նպատակը ազգային մանուկներ դաստիարակել էր։ Այս ընկերութիւն զպրոց մը բացաւ անմիջապէս «Հայկազեան» զպրոց անունով, և առաջին անգամ լինելով աշխարհարարի ընթերցուում մուցուց իր վարժարանի մէջ. «Հայկազեանի» աշակերտ միւս զպրոցաց աշակերտների պէս տաս տարիներով չը պիտի կարդար իրեն չը հասկացած գրաբար մեռած լեզուն (Աստուած ողորմի իր հոգւոյն), այլ պիտի կարդար քերական, ընթերցարան մը, ազգային պատմութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, տաղէրէն, ֆրանսերէն, մատենագրութիւն և այլն և այլն։ Այս դասերը բոլորվին նոր էին վանի համար, միւս զպրոցաց աշակերտներ չէին գիտեր թէ ազգային պատմութիւն ինչ կը սորվեցնէր, եթէ մէկ մը անոնց հարցնելու լիներ, թէ դու ինչ ազգէ ես, պատասխան պիտի ընդուներ քրիստոնեայ եմ, «Հայկազեան» ընկերութեան վարժարան չատ արագ յառաջադիմեց, և փոխանակ քաջալերեցնելու, սակայն անկէ չատ մեծ հալածանքներ կը բերեց. «Հայկազեանին» աշակերտներ փողոցէ մ'անցած ժամանակ, փողոցի ստամբակներէն և միւս զպրոցաց աշակերտներէն կը գանակոծուէին։ Երկու տարի այս գիրքով չարունակուեցաւ «Հայերէգ տարի այս գիրքով չարունակուեցաւ «Հայկը կատարուէին անդ։ Երբոլով հեռացնեմ «Հայկազեան» վարժարան երեսի վրայ մնաց, և «Հայկազեան» ընկերութեան անդամներ տրժամարվեցան մեծաւ մասամբ, և զպրոցը զպրուելու վրայ էր երբ հնաւ պարոն Մկրտիչ փարմաշլեան էֆէնդին։ 3—4 ամիս վան մնաց փարմաշլեան էֆէնդին և այս քիչ ժամանակամիջոցումնա չատ մը բարիներ արաւ վանեցւոց, մի ընկերութիւն կազմեց «Հայրենասէր» անունով, որոյ նպատակն էր հայրենասիրական զգացումներ տարածել վանի մէջ երեք միջոցներով, լսարանով, կիրակնօրեայ դասատուութիւն, և ընթերցարանով. 15 օրն անգամ լսարան կար «Հայրենասէր» ընկերութեան կենտրոնատեղի եղող «Հայկազեան» վարժարանի մէջ, ամեն կիրակի դաս կը տրուէր դաս առնող ուզող ոնկէ հասակի ազգայնոց, սակայն զատ ամեն մարդ ազատ էր կարդալու ընկերութեան բոլոր գիրքեր և լրագրիներ չընչին վարձք մը վճարելով։

Պ. փարմաշլեանի հնարէն մի քիչ բարելաւեցնելու «Հայկազեան» զպրոց, և վանի երիտասարդներ օրինակ առնելով «Հայրենասէր» ընկերութենէն, ընկերութիւններ կազմեցին. յիսեմ մէկ քանիսին անուններ «Բարեսէր» ընկերութիւն, որոյ նպատակն է կիրակի օրեր սուրբ պատկեր Աստուածայնէ կարդալով և երբեմն ալ թատրոններ ներկայացնելով «Ազգանուէր» ընկերութիւն, որ նպատակը նոյն է «Հայրենասէր» ընկերութեան նպատակին հետ, «Ուսումնասէր» ընկերութիւն որոյ նպատակն ալ լսարան ունենալ է. ասոնցմէ զատ կան ենարան ունենալ է. ասոնցմէ զատ կան ենարան ունենալ չափ ընկերութիւններ, որոց նպատակը իրենցմէ զատ ուրիշ ոչինչ կը հիշով կը իրենց նպատակին կը ծառայեն. քանի թէ իրենց նպատակին կը ծառայեն. այսպէս ամեն մարդ ընկերութեան մը անդամ է. Այսպէս ամեն վանեցիք արդի մտքային հետեւելով, ամեն օր ընկերութիւններ կը կազմեն, քանիսմամսէ վերջ քիչ մը սառ և գիրք հատաբերով, օր մնալ տեսնենս գրապարը գրաղարան պարպած է, գիրքեր և սառկներ իրենց տուն տարած է, ասոր վրայ կոչիներ կը լսուցուցին և ընկերութիւնը կը սառպվի։

Այսպէս ամա երբ կը լսուի որ վանի մէջ բազմաթիւ ընկերութիւններ կան, թող չը կարծեն ուրիշներ որ վանի ընկերութեանց բոլորն ալ ազգին ծառայելու նպատակս կազմուած են, այլ ինչպէս ըսի մեղային հետեւելու համար։

Մեր միւս զպրոցներ գրեթէ նոյն են, ինչ որ էին առաջ. չատ քիչ տարբերութիւն պտած են, «Հայկազեան» զպրոց դիտա գալեալ երեսի վրա մնացած է։ Մի զպրոց միայն կայ մեր քաղաքի մէջ, որ իրաւամբ զպրոց կրնայ համարուիլ, այն է «Արարատեան» ընկերութեան վարժարանը. աւելորդ կը համարիմ այս մասին տեղեկութիւններ տալ մանրամասնօրէն «Մշակի» ընթերցողաց. ուզող կրնայ «Արարատեան» ընկերութեան գրագ չը բերէ՝ նոր տեղեկագիր ձեռք բերել և կարդալ, կարդացող կրնայ գաղափար կազմել «Արարատեան» մասին։ «Արարատեան» ընկերութեան գործունէութեան մասին։ «Արարատեան» ընկերութեան թէ վարժապետաց և թէ գիւղային նախակրթարաններ չատ լաւ և բարեկարգ են, մի բան միայն լաւ չէ որ «Արարատեան» ընկերութեան զպրոցաց դասատուներ վանեցի լինելով, պէտք եղածին չափ բանգէտ չեն, կը յուսամ որ «Արարատեան» ընկերութիւն այս պակասը ևս կը լցնէ, և յարմար դասատուներ բերել կուտայ յարմար տեղերէ, եթէ ոչ նախակրթարաններու գոնէ միայն վարժապետաց համար։

Թող ներում մեզ, որ պահ մը մեր ինքդրէն չեզնցանք, գանք դարձեալ մեր ինքդրին վրա գրել. այս չափովս կարծեմ կրցի հասկցնել թէ որչափ յառաջ գնացած է վանեցի հայը, գէշ չը լիներ կարծեմ որ արական սեռի մասուրական յառաջադիմութեան վրայ գրել ձգելով, դառնամ գէպի իգական սեռի մասուրապէս յառաջ դիմելուն վերայ գրել։

Վանի մէջ յառաջնում իգական սեռին համար յատուկ զպրոց չը կար. 8—9 տարի յառաջ կ։ Գալոյ մէջ կազմուած «Ամանորեան» անուն ընկերութիւն Վանի մէջ զպրոց մը բացաւ աղջկանց համար. այս ձեռնարկը նոր լինելով առաջին անգամ ընդունելութիւն չը գտաւ վանեցիներէ, շատեր բարոյականութեան դէմ մեղանչել կը կարծէին, թէ որ իրենց աղջիկներ այդ զպրոց խրկէին, ասելով թէ «աղջիկ ինչ է որ կարդալ սորվի, հաց եփել, թիներ վառել, կերակուր պատրաստել գիտնայ բաւական է» ահա այսպիսի մտածումով շատեր իրենց աղջիկներ զպրոց չեն խրկեր, և Վանի պէս բազմամարդ քաղաքի մը մէջ կայ մի զպրոց միայն աղջկանց համար, այն ալ զպրոց չը կրնար համարուիլ. բայց Աստուած թող զպրոց համարէ։

Թոսքրնիր եղանակելով, կասեմ թէ վանեցիք չատ լաւ մեծցեր են գարուս պահանջման համեմատ իրենց որդիներ դաստիարակելու մէջ. շատեր կը կարծեն որ վանեցիք բաւական յառաջդիմած են ուսման մէջ, և կը համարձակին ասել որ պոլսեցիներէն ալ աւելի, բայց ես որ դիրութիւն ունեցեր եմ Պոլսոյ զպրոցներ աչքէ անցնելու, տեղւոյս զպրոցներն ալ տեսած եմ, ես չեմ կրնար չը խոստովանել որ վանեցիք չատ տարբերութեան մէջ կը գտնուին զատաբարոյութեան խնդրոյ մասին, վանեցիք, ոչ Բերլինի գանձարիրը, ոչ Եւրոպական տէրութիւններ չեն փրկեր զմեզ մեր ներկայ գերութիւնէն, միմիայն մենք կրնանք զմեզ փրկել, երբ փրկուել ուզենք։

Վ. Ա՛ստ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաղիստ, 29 փետրվար

Այս միջոցիս չատերը հարցնում են ինձանից, թէ ինչ է պատահել, որ էլ Արմենական նամակներ չեն երեւում «Մշակի» մէջ. չը մնի թէ անգամի զամբիւղը դրանց էլ սկսեց կուլ տալ— ես պատասխանեցի, թէ այդ երեսներից ինչու էք վախենում, քանի որ դա բնական պէս է, մինչև այժմ իմ նամակներից զամբիւղի մէջ չեն խորտակվել, բայց այսուհետև կարող է պատահել դա, որովհետև լուսագիրմութիւնը պարսկական մարդկանցից է։ Ուրիշ տեղերի հայերը օր օրից առաջ են գնում, իսկ մենք զէպի յետ ենք դառնում և չատ ապրին իմ նամակները, որ այս բանում մեզ գնէ արդարացրին. քանզի, որքան լինում եմ, ես մի քանի նամակ պէտք է ունենամ խմբագրատան մէջ։ Բայց մի բան ասենք դեռևս այս տողերի մէջ և պէտք է որ ճշմարտությունը խոստովանեմ։ Մեր պարսկահայերիս յետադիմութիւնը չատ էլ պատասխանի արժանի չէ, չատ էլ յանցանք չէ, մենք այդտեղ ունենք մի թագրած մտաք, ուրեմն թոյլ տուեցէք որ բացատրեմ դրան։ Եղբայր, մի անգամ մտածեցէք, և նեղադրեցէք թէ այս բոլոր ապիարոս առաջ ընթանայ, առաջ անցնի և բոլորովին առաջանայ, ինչ էք կարծում, միթէ յետեր պէտք է զարգակ թողնել, միթէ յետեւում ասպարէզ չը կայ, միթէ յետեւում զորձող մարդիկ պէտք չեն։ Ահա մեր պարսկահայերիս խնդրը և ունակութիւնը, որ Նորմիտ հեռատեսութեամբ մեր սեպական յետամնացութիւնից չենք հեռանում, և չենք էլ հեռանայ, թող ով ինչ ուզում է ասէ, ամեն ոք իր հարիւրն աւելի լաւ գիտէ։

Այս տարի Պարսկաստանում, ձմեռը խիստ ցուրտ էր, մինչև ու սառնամանիքով պատած։ Մեր քաղաքում հացը ու ցորենը թէև սովորականից եռապատիկ գնով են վաճառվում, սակայն մատչելի են։ Ցորեն ունեցողները չատագէտ են ծախելու, որովհետև հասատապէս գիտեն, որ յառաջիկայ ամառը խիստ առատ հունձ կը լինի։

Մեր դերասանական խումբը՝ բարեկենդանի վերջին երկու չաբաթվայ մէջ, տուեց երկու թատերական ներկայացում, մին յոգուս Լիլլաա Թաղի զպրոցներին, և միւսը Նորահաստատ խնայողական ընկերութեան օգտին։ Երկու ներկայացումներից զոյացաւ աւելի քան 300 բուբլի կամ 100 թուման։ Առաջին ներկայացումն էր «Շուտնիկ» ողբերգութիւնը և մի ֆրանսերէնից թարգմանած կատակերգութիւն (La cloche du soir)։ Երկրորդն էր «Մեծն Նարէս և Պապ թագաւոր» ողբերգութիւնը «Բարեկենդանի քէֆ» կատակերգութեան հետ, որ երկոքին էլ բաւականին յաջող անցան և հասարակութիւնը գոհ մնաց։

Այդ օրերում մեր Արամեան զպրոցում կատարվեցաւ մի ազգային հանդէս, ձիւռ բարեկենդանի հինգշաբթի օրը, ի դիտաւոր Ս. Վարդանանց։ Պատարագի արձակմանից յետ եկեղեցական դասը, ժողովուրդը և զպրոցների աշակերտները եկան զպրոցի բակը, ուր խօսվեցան և կարդացվեցան մի քանի ճառեր և աշակերտները երգում էին ազգային երգեր։ Պատւոյի հոգաբարձութիւնը հանդիսականաց համար պատրաստած էր մի առատ նախաճաշ առաջնորդարանի դահլիճում։ Հանդէսը բաւական ուրախարժ էր։

Ցեղին՝ ռուսաց գնեցեալ հիւպատոսի կամեցողութեամբ, մեր քաղաքի հայոց մայր եկեղեցում եղաւ գոնարանական աղօթք Ռուսաց Ալեքսանդր կայսեր հրաչալի ազատութեան և նորա 25 ամեայ թագաւորութեան յօբելեանի յիշատակի համար։ Պ. հիւպատոսը նոյնպէս և հիւպատասարեալ բոլոր ծառայողները ներկայ էին։ Ներկայ էին նոյնպէս ֆրանսիացոց հիւպատոսը, եւրոպացիներ, և յատ ռուսաց և պարսից հպատակ հայեր գոհ և ուրախ սրտերով։

Դավրէժ քաղաքի հայ չքաւորների համար եղաւ մի հանդանակութիւն, որից զոյացաւ մօտ 300 թուման, որ ցորեն և աւելիք գնելով բաժանվում է աղքատների և այնպիսիներին, որոնք ազգածէլ գիտեն և մուրալ ամաչեն։

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՆԶԱՂԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. Պետերբուրգ, 28 մարտի։ «Правительственный» լրագրը հաղորդում է, որ «Молва» լրագրին առաջին նախազգուշութիւն է արուած։ «Петербургская Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ Աֆղանիստանում զեներալ Բաբերտոսի զօրքերը սաստիկ ջարդվեցան։ Սխալ են այն լուրերը, իբր թէ չինական զօրքերը անցել են ռուսաց սահմանները։ Նիժնի-Նովգորոդի երկրում սահմանը անցել են չինական հասարակ բանէրներ։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ չինական և եւրոպական ջրերի մէջ կը կենտրոնացնի ռուսաց զինուորական նաւերի մեծ քանակութիւն։ Ս. Պետերբուրգի մէջ կալանաւորված է Կուրիէր, որ մեղադրվում է ահագին քանակութեամբ կեղծ անագադիներ շինելու մէջ։ Կուրիէրի կինը յարաբերութիւններ ունէր ցիպսիական կանանցի հետ։ Նրանց մօտ գտնված է 92,000 բուբլի։

Ս. Պետերբուրգ, 29 մարտի։ Երեկ վախճանվեցաւ Պետերբուրգի մէջ պրոֆեսոր Պատարին։ Իշխան Գորչակով հիւանդ է կատաղով, պատված է անկողնի մէջ և ոչ որի չէ ընդունում։ Ֆինանսական գեներալ-լիյտենանտ Երնրօտ, բազարական կառավարութեան հրաւէրի համեմատ, համաձայնեցաւ Բալգարիայի զինուորական մինիստրի պաշտօնը ընդունել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՐՈՒՆԻ